Մրցույթ՝ ՀՀ Տավուշի մարզի «Պառավաքարի Էդիկ Մելքումյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի (25 դասաժամ), քիմիայի (12 դասաժամ), տեխնոլոգիայի (4 դասաժամ աղջիկների խումբ), կերպարվեստի (3 դասաժամ), երաժշտության (3 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1.դիմում (Ձև 1), 1 մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

2.բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

3.անձը հաստատող փաստաթուղթ,

4.«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

5.ինքնակենսագրություն(Ձև 5)

6.այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությանում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

7.ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

8.հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

9.որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 24-ից մինչև սեպտեմբերի 6-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթները տեղի կունենա 2022 թ. **սեպտեմբերի 8-ին՝ ժամը 12:00-ին և ժամը 14:00-ին** ՀՀ Տավուշի մարզի Պառավաքարի Էդիկ Մելքումյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Պառավաքար, 4-րդ փողոց, շենք 9:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 094-05-33-40 հեռախոսահամարով: